ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Հերթական ատեստավորման ենթական ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի դասընթացներ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԽԱՆՈՒՄ ԽԱՉԻԿԻ

(Կաքավաձորի Մեսրոպ Մխիթարյանի անվան միջնակարգ դպրոց)

ԿԱՆԱՆՑ ՖՈՒՏԲՈԼԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հետազոտական աշխատանք

Ղեկավար՝ մանկավարժական
գիտությունների թեկնածու
դոցենտ՝ Արտակ Ստեփանյան

ԵՐԵՎԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՀՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ԳԼՈՒԽ 1. ԿԱՆԱՆՑ ՖՈՒՏԲՈԼԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆ Ու ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ ..5

1.1. Ինչպես է առաջացել կանանց ֆուտբոլը 5

1.2. Առաջին համաշխարհային պատերազմն և կանանց ֆուտբոլի էվոլյուցիան..6

1.3. Իրավունքների համար պայքար. 21-րդ դար 8

ԳԼՈՒԽ 2. ԿԱՆԱՆՑ ՖՈՒՏԲՈԼԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 11

2.1. Հայ կնոջ կերպարը. Պատմության հետքերով..... 11

2.2.Կանանց ֆուտբոլի ստեղծման և զարգացման ընթացքը Հայաստանում ...12

2.3 Հայասատանում կանանց ֆուտբոլի ընկալման և զարգացման գործընթացում սոցիալական մեդիայի դերը 14

ԳԼՈՒԽ 3 «ԱԽԹԱՄԱՐ» ԱՂՋԻԿԻՆԵՐԻ ՖՈՒՏԲՈԼԻ ԱԿԱԴԵՄԻԱ 17

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՅ 20

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 21

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դարեր շարունակ ֆուտբոլ մարզաձևը եղել է ամենամեծ մասայականություն վայելող մարզաձևը և սիրելի շատերի կողմից: Այն կոլեկտիվ խաղ է, որն սիրելի է բոլորի կողմից՝ անկախ տարիքից:

Ֆուտբոլը որպես թիմային խաղ դաստիրակում է ընկերասիրություն, փոխօգնություն, զարգցնում է կամային այնպիսի հատկանիշմեր ինչպիսիք են պատասխանատվությունը, հարգանքը խաղընկերների և մրցակիցների նկատմամբ: Ֆուտբոլը այն մարզաձևն է, որն համակողնանի ներգործություն է ունենում մարզիկների բոլոր օրգանհամակարգերի վրա, համալիր մշակում է արագաշարժություն, դիմացկունություն, ցատկունակություն, կորդինացիան, ճարպկություն և այլն:

Մեծ է ֆուտբոլի գեղագիտական ներգործությունը, ինչպես մարզիկների, այնպես էլ հանդիսատեսի վրա: Ֆուտբոլի գեղեցկությունը միայն տեխնիկայի ցուցադրումը, ֆուտբոլիստների առանձին կատարողական վարպետությունը, խաղային առանձին պահերի ավարտ չէ, այլ գեղեցիկ կոմբինացիաների փոխհամագործակցությունը և իհարկե գոլ խփելը:

Ֆուտբոլը ունի շատ հին պատնություն, մարզաձևը համարվել է տղամարդուն բնորոշ մարզաձև: Նախկինում թույլատրվել է խաղալ միայն տղամարդկանց, շատ երկրներում արգելվել է նույնիսկ կանանց ներկա գտնվել խաղերին: Հետագայում ՝1971 թվականին, արգելքը հանվել և կանանց թույլատրվել է շարունակել խաղալ ֆուտբոլ:

Հանանց ֆուտբոլը իր պատմությունն ու դերը ունի նաև հայկական ֆուտբոլի զարգացման գործում: Կարծրատիպերով և մի շարք այլ հանգամանքներով պայմանավորված կանանց ֆուտբոլը Հայաստանում ևս բախվել է խոչընդոտների:

Հետազոտության նպատակը: Սույն աշխատանքին ուսումնասիրման նպատակն է՝ **կանանց ֆուտբոլի զարգացումը Հայաստանում:**

Նշված նպատակն իրագործելու համար աշխատանքի հիմքում դրվել և լուծվել են հետևյալ խնդիրները՝

- ուսումնասիրել և ներկայացնել կանանց ֆուտբոլի ստեղծման և զարգացման պատմությունը,
- ուսումնասիրել և ներկայացնել կանանց ֆուտբոլում առկա ծնդիրները

● ուսումնասիրել և ներկայացնել Հայաստանում կանանց ֆուտբոլի ստեղծման և զարգացման պատմությունը:

● ուսումնասիրել և ներկայացնել կանանց ֆուտբոլի ընկալում Հայաստանում, առկա խնդիրները:

Աշխատանքի կառուցվածքը: Աշխատանքը բաղկացատ է ներածությունից, 3 գլխից, եզրակացություններիցից, օգտագործված գրականության ցանկից:

1. ԿԱՆԱՆՑ ՖՈՒՏԲՈԼԻ ՊԱՏՆՄՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ

1.1 Ինչպես է առաջացել կանանց ֆուտբոլը

Կանանց ֆուտբոլում առաջին պաշտոնական խաղը գրանցվելէ 1899 թվականին Անգլիայում, սակայն որոշ ֆուտբոլային գործիչներ որոշում են, որ այն թույլ սեռի համար չէ, և 1921 թվականին արգելում կանանց խաղալ ֆուտբոլ: Այս արգելքը հանում են 1971 թվականին, ինչից հետո ողջ աշխարհում սկսում է մեծ թափով զարգանալ կանանց ֆուտբոլը:

Որոշ պատմական աղբյուրներ նշում են, որ կանայք սկսել են ֆուտբոլ խաղալ դեռևս 18-դարում՝ Շոտլանդիայում: Այնտեղ եղել է շատ հետաքրքիր ավանդույթ, ըստ որի ամուսնացած կանայք ֆուտբոլ էին խաղում չամուսնացած աղջիկների հետ, որը և հնարավորություն էր տալիս չամուսնացած տղաներին գտնել իրենց երկրորդ կեսին:

Կանայք դժվարին ճանապարհ են անցել ֆուտբոլում իրենց ապագան կերտելու համար, այդ մասին են վկայում օրինակ՝ "Կիսաշրջազգեստով բարեգործական խաղ և իրավունքի համար պայքարը. բոլորովին այլ ֆուտբոլային պատմություն". *80 օրից կմեկնարկի կանանց ֆուտբոլի աշխարհի առաջնությունը: Ու եթե նախկինում նմանմն իրադարձությունները առանձնապես մեծ ուշադրության չէին արժանանում,ապա այժմ ամեն բան կտրուկ փոխվում է: Կանանց ֆուտբոլը կարելի է սիրել, կամ քննադատել, դիտել կան հատուկ չնկատել, բայց փաստը մնում է փաստ.* ՖԻՖԱ-ի նախագահ Ջաննի Ինֆամտինոն տարիներ շարունակ խոսում է համաշխարհային հանրությունում կանանց ֆուտբոլ կարևորության մասին նշելով, որ Ֆրանսիայում կանանց ֆուտբոլի աշխարհի առաջնության բոլոր տոմսերը վաճառվել են 31 րոպեում[1]:

Բայց հարյուր տարի առաջ ամեն բան այլ էր: Ժամանակին կանաց մուտքը տրիբունա արգելված էր, վերջիններս իրավունք չունեին ներկա գտնվել խաղերին: Անգլիական "Պրեսթոն Նորթ Էնդ" ակումբն առաջինն էր, որ թույլ տվեց կանանց ներկա գտնվել հանդիպումներին: Սա արվեց մի պատճառով. ֆուտբոլային ֆունկցիոներները վախենում էին, որ տրիբունաներում բախումներ կլինեն, ինչի

[1] **ТОП интересных фактов о женском футболе.** https://footballstyle.com.ua/news/177.top_interesnih_faktov_o_zhenskom_futbole,2020

պատճառով էլ որոշեցին նման փոփոխություններ կատարել:Մուտքը կանանց համար անվճար էր և 1885 թվականին ֆուտբոլային հանդիպմանը ներկա գտնվեցին մոտ երկու հազար իգական սեռի ներկայացուցիչներ[2]:

1.2 Առաջին համաշխարհային պատերազմն ու կանանց ֆուտբոլի էվոլյուցիան

Կանանց ֆուտբոլի զարգացման նոր փուլը սկսվեց առաջին համաշխարհային պատերազմի տարիներին:

1914 թվականին տղամարդիկ գնացին ռազմաճակատ, իսկ աղջիկները մնացին գործարաններում աշխատելու: Առողջապահության և սոցիալական ապահովության նախարարությունը զբաղվում էր աղջիկների հանգստի կազմակերպմամբ՝ պարի և լողի հետ մեկտեղ կանայք ընտրում էին նաև ֆուտբոլը, որը խաղում էին ճաշի ընդմիջումների ժամանակ:

Մեծ Բրիտանիայի կառավարությունը աջակցում էր խաղերին, քանի որ դրանք հնարավորություն էին տալիս գումար հավաքել բարեգործության համար: Աղջիկները միավորվում էին թիմերում և խաղում «Խանութ ընդդեմ խանութի» հանուն վերացման, իսկ ավելի ուշ սկսում մասնակցել դաշտերում անցկացվող հանդիպումներին, որտեղ պրոֆեսիոնալ ակուբները խաղում էին պատերազմից առաջ: 1917 թվականին ամռանը այնքան թիմեր կային, որ որոշվում է անցկացնել «Պաշտպանական գործարանի աշխատողների գավաթ» : Ամենահայտնի թիմերից է «Դիկ Քերի լեդիներ»-ը, որը հիմնադրվել է 1914թ. Պորտսմուտում: Վերջինիս մարզել է գործավար Ալֆրեդ Ֆրանկլանդը[3]:

Ակումբը շրջել է երկրով մեկ, մասնակցել հանդիպումների և գումար հավաքել վիրավորների բուժման համար: 1917թվականին ՝ Սուրբ Ծննդյան օրը տեղի է ունենում ֆուտբոլային հանդիպում, որի ժամանակ հավաքվում է ռեկորդային 200 ֆունտ (41000 ժամանակակից չափանիշներով),

---

[2] 100 лет назад женский футбол был популярнее мужского. И это не шутка https://www.championat.com/football/article-3707013-interesnye-fakty-o-zhenskom-futbole-chempionat-mira-po-futbolu-sredi-zhenschin.html, 2019

[3] 100 лет назад женский футбол был популярнее мужского. И это не шутка https://www.championat.com/football/article-3707013-interesnye-fakty-o-zhenskom-futbole-chempionat-mira-po-futbolu-sredi-zhenschin.html, 2019

Հանդիպմանը ներկա էին մոտ 10.000 մարդ:

Նմանատիպ ֆուտբոլային հանդիպումներ անցկացնելով կանանց թիմերը բարեգործական նպատակով գումարներ էի հավաքում և ուղարկում ռազմաճակատ, փորձելով առավելագույնս օգնել զինվորներին, փորձելով լուծել սննդի, դեղորայքի և այլ անհրաժեշտ պարագաների հետ կապված խնդիրներ:

Պատերազմի ավարտից հետո շատ աղջիկներ կորցնում են իրենց աշխատանքև, բայց ոչ ֆուտբոլի հանդեպ սերը: Ավելին, կանանց ֆուտբոլը շարունակում էր հանրաճանաչություն ձեռք բերել. 1919թվականին «Դիկ Քերի լեդիներ»-ը խաղում են «Նյուքասլ Միացյալ լեդիներ»- ի դեմ և հավաքում 1200 ֆունտ (2500.000), որը նվիրաբերում են աղքատ զինվորականներին, ինչպես նաև այն աշխատողներին, ովքեր հայտնվել էին ֆինանսական ծանր վիճակում:

Մեկ տարի անց տեղի է ունենում առաջին միջազգային հանդիպումը: Ալֆրեդ Ֆրանկլանդը Ֆրանսիայի հավաքականին հրավիրում է Անգլիա՝ ցուցադրական հանդիպումների շարք անցկացնելու, ինչից հետո ամենուր սկսվում է խոսվել ֆուտբոլիստուհիների մասին: Այդ հանդիպումների ընթացքում «Դիկ Քերի լեդիներ»-ը հավաքում են 20-ից 53 հազար հանդիսատես, վաստակում մեծ գումար, որը շարունակում են նվիրաբերել ռազմական կազմակերպություններին: Արդեն 1921 թվականին ֆուտբոլիստուհիները անցկացնում են 67 հանդիպում: Բայց ամեն ինչ փոխվեց այն բանից հետո, երբ ակումբը աջակցեց գործադուլ անող հանքագործներին, որոնց աշխատավարձը կառավարությունը կրճատել էր 50% -ով: Ֆրանկլենդի թիմը անցկացնում է մի շարք բարեգործական խաղեր՝ ածխահանքերի աշխատողների ընտանիքների համար գումար հավաքելու նպատակով: Այդ ամենից հետո սկսվում է խոսվել, որ կանանց ֆուտբոլը դարձել է բանվորական շարժմանն ու արհմիություններին օգնող քաղաքական գործիք: Սկսվում է ոտնձգություն. Ֆրանկլենդին մեղադրում են ֆինանսական խարդախության և փողերի լվացման մեջ, բժիշկները սկսում են խոսել ֆուտբոլով զբաղվով կանանց առողջության վտանգների մասին: Ի վերջո ամեն ինչ տխուր ավարտ ունեցավ. 1921թվականի դեկտեմբերին 5-ին Ֆուտբոլի ասոցիացիան հանդես եկավ հայտարարությամբ. *«Ասոցիացիայի ներկայացված բողոքները սրիպեցին խորհրդին կայացնել հետևյալ որոշումը. Ֆուտբոլը բոլորովին ոչ պիտանի սպորտաձև է կանանց համար: Բողոքները ցույց են*

տվել նաև, որ խաղերի մի մասը օգտագործվել է որպես փողի խարդախության միջոց: Հայտնաբերվել է բարեգործական միջոցների յուրացում: Խորհուրդը կարծում է նաև, որ ծախսերը չափազանց շատ են, իսկ բարեգործական եկամուտներ՝ շատ ցածր: Այդ իսկ պատճառով խորհուրդ խնդրում է ասոցիացիային պատկանող ակումբներին հրաժարվել կանանց ֆուտբոլային ակումբներին խաղահրապարակներ տրամադրելուց»[4] *:*

Հրամայվեց լուծարել կանանց ֆուտբոլի ակումբները, չխոսել կանանց ֆուտբոլի մասին և չխրախուսել: Անգլիայի օրինակին հետևելով՝ գործեցին նաև եվրոպական այլ երկրներ: Եվ այսպես, գրեթե 30 տարով կասեցվեց կանանց ֆուտբոլի զարգացումը:

Կանանց ֆուտբոլի զարգացման մեջ առաջին տեղաշարժը սկսեց ի հայտ գալ 60-ական թվականներին ՝ պայմանավորված ֆեմինիստական շարժումների աճով: 1969 թվականին Անգլիայում ստեղծվեց Կանանց ֆուտբոլի ասոցացիան, որը ներառում էր 44 ակումբ: Դրանից մեկ տարի անց Իտալիայում Մարտինիի աջակցությամբ անցկացվում է առաջին խոշոր մրցույթը՝ կանանց աշխարհի առաջնությունը: Արգելքները հանվում են, և սկսվում է կանանց ֆուտբոլի պատմության նոր էջը՝ շատ ավելի հաջող:

● Առաջին միջազգային պաշտոնական հանդիպումը կայացել է 1971 թվականին Հոլանդիային և Մեքսիկային միջև:

● Եվրոպայի առաջին առաջնությունը տեղի է ունեցել 1982 թվականին:

● Աշխարհի առաջին առաջնությունը՝ 1991 թվականին:

● Կանանց ֆուտբոլը օլիմպիական խաղերում իր դեբյուտը նշել է 1996 թվականին:

1.3 Իրավունքների համար պայքար. 21-րդ դար

Չնայած այն հանգամանքի, որ այսօր կանանց ֆուտբոլի վիճակը անհամեմատ ավելի լավ է, քան հարյուր տարի առաջ, ֆուտբոլիստուհիները շարունակում են պայքարել իրենց իրավունքների համար և կոտրել կարծրատիպերը, թե սա տղամարդկանց սպորտաձև է: Դրանում նրանց օգնում են միջազգային

[4] 100 лет назад женский футбол был популярнее мужского. И это не шутка https://www.championat.com/football/article-3707013-interesnye-fakty-o-zhenskom-futbole-chempionat-mira-po-futbolu-sredi-zhenschin.html, 2019

կազմակերպությունները՝ ՖԻՖԱ-ն և ՈՒԵՖԱ-ն, որոնք անխոնջ խոսում ե կանանց ֆուտբոլի կարևորության մասին, ինչպես նաև այն ակտիվորեն առաջ մղած սպորտային բրենդները: Նրանց թվում է Nike-ը: Ընկերությունը մշակել է համազգեստ 14 ազգային հավաքականների համար, և առաջին անգամ հանդերձանքները նման չեն տղամարդկանց համազգեստին: Շնորհանդեսը տեղի է ունեցել 2019 թվականի մարտի 11-ին Փարիզում:

Սակայն այս ամենին զուգահեռ աշխատավարձներն ու մրցանակները շարունակում են ցավոտ կետ մնալ աղջիկների համար: Այն գումարները, որոնք կանայք ստանում են, շատ ավելի քիչ են, քան տղամարդկանցը: Սրա պատճառով ԱՄՆ ֆուտբոլի ազգային հավաքականը 2017 թվականին դատի է տվել ԱՄՆ ֆուտբոլի ֆեդերացիային ինչի շնորհիվ աղջիկների աշխատավարձը մի փոք բարձրացել է: Այս իրավիճակի մասին խոսել է ԱՄՆ հավաքականի կիսապաշտպան Մեգան Ռապինոն Փարիզում Nike-ի շնորհանդեսի ժամանակ. *«Անկեղծ ասած, ես չգիտեմ, թե ինչու է այս աշխատավարձի տարբերությունը»*,- ասել է նա: *«Միգուցե այն պատճառով, որ երկար ժամանակ տղամարդկանց ֆուտբոլը ավելի հայտնի էր: Բայց ժամանակները շատ արագ են փոխվում: Ես խաղում եմ մոտ 10 տարի է, և եթե նախկինում 5000 մարդ էր գալիս մեր խաղերի, ապա հիմա այդ թիվը հասել է 30.000-ին»*[5]*:*

Մեգանի կարծիքով՝ մեծ ներդրումներ են անհրաժեշտ կանանց ֆուտբոլը մասսայականացնելու համար.*«Եթե ունես թույն պրոդուկտ, կարող ես նման արշավ սկսել, բայց գումար է պետք գովազդի, մարքեթինգի, բրենդինգի համար: Սա անհրաժեշտ է տոմսերի վաճառքի համար, բայց դա հնարավոր չէ անել առանց լուրջ ներդրումների»:*

Նշենք, որ այսօր ՖԻՖԱ-ն մեծ գումարներ է ներդնում կանանց ֆուտբոլի մասսայականացման և զարգացման գործում:

[5] 100 лет назад женский футбол был популярнее мужского. И это не шутка https://www.championat.com/football/article-3707013-interesnye-fakty-o-zhenskom-futbole-chempionat-mira-po-futbolu-sredi-zhenschin.html, 2019

ФОТО: SPARTACUS-EDUCATIONAL.COM

ФОТО: SPARTACUS-EDUCATIONAL.COM

2. ԿԱՆԱՆՑ ՖՈՒՏԲՈԼԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

2.1 Հայ կնոջ կերպարը. Պատմության հետքերով

Խոսել Հայաստանում կանանց ֆուտբոլի, առավել ևս վերջինիս զարգացման մասին և շրջանցել հայի տեսակի, հայ կնոջ կերպարի, ավանդույթների և կարծրատիպերի մասին, նշանակում է ոչինչ չասել: Դեռևս հեթանոսական ժամանակներից հայ կինը համարվել է ընտանիքի հիմք և ներկայացվել որպես ուժեղ կերպար: Անխոս դա ճշմարիտ է: Դրա վառ վկայությունն է պատմիչների շնորհիվ մեզ հասած գրավոր վկայություններում: *Այդ մասին կարելի է տեսնել Ագաթանգեղոսի վկայություններում, որտեղ նշված է, նախաքրիստոնեական շրջանում հայ կնոջը կերպարը. հայ կինը եղել է «կենսատու», «շունչ և կյանք»:* Հեթանոսական դիցարանում կարևոր դեր էր խաղում Անահիտ աստվածուհին: Վաղ շրջանում Անահիտը ռազմի աստվածուհին էր, ինչը վկայում է այն մասին, որ վաղ ստրկատիրական շրջանում հայ կանայք մասնակցել են ռազմական գործողություններին: Միայն հետագայում է,որ Անահիտի կերպարը վերափոխվում է և ստացել ավելի կանացի դեր՝ դառնալով պտղաբերության աստվածուհի[6]:

Որպես հետաքրքիր և կարևոր պատմական փաստ նշենք, որ կնոջ և տղամարդու իրավահավասարության մասին խոսվել է դեռևս չորրորդ դարում: Կանանց և տղամարդկանց իրավունքների հավասարության մասին մշտապես շեշտվել է հին հայկական իրավական փաստաթղթերում: Կնոջ իրավունքներին մեծ ուշադրություն է դարձվել նաև աշխարհիկ իրավական փաստաթղթերում: Դրա վառ վկայությունն է Մխիթար Գոշի « Հայոց Դատաստանագիրք»-ը, որում նկարագրվում է ընտանիքում տղամարդկանց և կանանց դերը, շեշտվում է կնոջ ՝ կրթություն ստանալու կարևորությունը: *«Կրթված կանայք հասարակության համար գանձ են»,-գրել է Մխիթար Գոշը 12-րդ դարում*:

Հայաստանի առաջին սահմանադրություն համարվող Շահամիր Շահամիրյանի «Որոգայթ փառաց»-ը, որն համարվում է հայ իրավունքի կարևորագույն փաստաթղթերից մեկը, ևս ունի հստակ ձևակերպում կանանց և տղամարդկանց իրավահավասարության մասին:

[6] Հայ կինը՝ պատմության խորքերից, https://hetq.am/hy/article/33007,2014

Շարունակելով անդրադարձ կատարել հայ կնոջ դերին, իրավունքներին և հասարակական գործունեությանը, որպես հիշեցում նշենք, որ ունեցել ենք Փառանձեմ, Զապել, Էրատո, ովքեր գահակալել են հին դարերում:

Դարերի ընթացքում ավելի է շեշտվել կնոջ և տղամարդու իրավահավասարության հարցը: *Հայաստանի առաջին Հանրապետությունը (1918-1920թթ.) աշխարհում առաջիններից էր, որ կանանց տվեց ընտրելու իրավունք և հանրային կառույցներում ընտրվելու իրավունք*[7]*:*

Պատմական տարբեր ժամանակաշրջաններում հայ կնոջը կարելի էր տեսնել տարբեր ոլորտներու, դա շարունակվել է ԽՍՀՄ-ի օրոք և Հայաստանի երկրորդ Հանրապետության հռչակումից հետո. ռազմական,քաղաքական,մարզական և այլն: Սակայն այս ամենին զուգահեռ եղել են նաև սահմանափակումներ, կարծրատիպեր որոնք պատնեշ են հանդիսացել հայ կնոջ՝ այս կամ այն ոլորտում կայանալու ճանապարհին:

2.2 Կանանց ֆուտբոլի ստեղծման և զարգացման ընթացքը Հայաստանում:

Ինչպես արդեն նշեցի նախորդ ենթագլխում, հայ աղջիկը, հայ կինը հաճախ է բախվել և բախվում արգելքների որոշ ոլորտներում, դրանցից է նաև սպորտը: Հայաստանում կան մարզաձևեր որոնք տարիներ շարունակ ասոցացվել են տղամարդու հետ, ինչի պատճառով շատ աղջիկներ սիրել, ունեցել են տաղանդ, բայց երբեք չեն զբաղվել՝ առավել ևս փորձել հասնել մեծ նվաճումների այդ մարզաձևերում: Այդ մարզաձևերից է նաև ֆուտբոլը: Դա բացարվում է մի շարք պատճառներով. քանի որ բնորոշվել է տղամարդուն, զարգացած և տարածված չի եղել բավարար չափով, հայ ավանդապաշտ ընտանիքը ուղղակի չի ընդունել աղջկա ներկայությունը ֆուտբոլում և այլ: Սակայան քայլելով ժամանակին համընթաց որոշ կարծրատիպեր սկսեցին կոտրվել, եղան աղջիկներ, ովքեր չվախեցան դեմ գնալ հասարակությանը և ընտրեցին ֆուտբոլը: Վերջինիս վառ վկայություններն են պատմական փաստերը , որոնք ներկայացված են ստորև:

Հայաստանում կանանց ֆուտբոլը ի հայտ է եկել 1987թ-ին: Առաջին թիմը ձևավորվեց «Նաիրի» ակումբում, ապա ստեղծվեց Ապարանի «Նիգ» թիմը: Այս

[7] Նույն տեղում

թիմերը ղեկավարել են Հայաստանում կանանց ֆուտբոլի հիմնաքարեր համարվող մարզիչներ Վլադիմիր Տերյանը, Ռուբեն (Օնիկ) Սուքիասյանը, Օնիկ Թովմասյանը և Լևոն Բարսեղյանը:

1990թ. օգոստոսին Դնեդրոպետրովսկում անցկացվեց «Կաշվե գնդակի» մրցաշար 14-15տարեկան աղջիկների մասնակցությամբ, որտեղ հայ աղջիկները գրավեցին երրորդ տեղը: Նշենք որ ԽՍՀՄ առաջին փորձնական առաջնությունը կայացել է հենց նույն թվականին,որին բարձագույն խմբում մասնակցել են 24 թիմեր, հայկական «Նաիրի» թիմը զբաղեցրել է 15 –րդ տեղը, իսկ առաջին խմբում անդես եկած «Նիգ»-ը գրավել է երկրորդ տեղը: Մեկ տարի անց կայացավ ԽՍՀՄ երկրորդ առաջնությունը:

ՀՀ առաջին առաջնությունը անցկացվել է 1992թ, որի հաղթող է ճանաչվել«Ասպարեզ» թիմը: Հետագայում կանանց ֆուտբոլը Հայաստանում զարգացում չունեցավ մինչև 1999 թվականը:

1999 թ.-ին անցկացվեց ՀՀ երկրորդ առաջնությունը, որին մասնակցում էին 6 թիմեր: Առաջին պատվավոր տեղը գրավեց «Շենգավիթ» թիմը,որի մարիզիչն էր Սամվել Ադամյանը

2001թ. ստեղծվեց «Քոլեջ» ակումբը: Վերջինս 2002թ. մասնակցեց Չեմպիոնների լիգայի խաղերին և կրեց խոշոր պաչտություն (մարզիչներ՝ Մ.Միքայելյան, Ռ.Ավանեսյան,ակումբի նախագահ՝ Հ.Գրիգորյան):

Հայաստանի կանանց ազգային հավաքականը առաջին անգամ աշխարի առաջնության նախընտրական փուլին մասնակցել է 2003թ., իսկ 2004 թ.-ին Հայաստանի մինչև 19 տարեկանների հավաքականը առաջին անգամ մասնակցել է Եվրոպայի ընտրական փուլին (մարզիչ՝ Մ.Միքայելյան):

Հայաստանի կանանց ազգային հավաքականը 2006թ. մասնակցել է Եվրոպայի նախընտրական փուլին և գրավել երկրորդ տեղը, մարզիչներն էին Մ.Միքայելյանը և Լ.Հայրապետյանը:

Հայաստանի մինչև 17 տարեկանների աղջիիկների հավաքականը 2007թ. առաջին անգամ մասնակցեց Եվրոպայի ընտրական փուլին:

2008թ տեղի ունեցավ առաջին ընկերական մրցաշարը, որտեղ Հայաստանը գրավեց առաջին տեղը (մարզիչներ՝ Ս.Ադամյան, Լ. Հայրապետյան): Նույն թվին 17 և 19 տարեկան աղջիկները մասնակցեցին Եվրոպայի ընտրական փուլին:

Հայաստանի կանաց ազգային հավաքականը երկրորդ անգամ մասնակցել է աշխարհի առաջնությանը 2009թ., մարզիչներ՝ Ս. Ադամյանի և Լ.Հայրապետյանի գլխավորությամբ:

Այսօր մեծ թափով տրված է կանաց ֆուտբոլի զարգացման և մասսայականացման հարցը: Հայաստանում վերջին տարիների ընթացքում անհամեմատն ավլացել է ֆուտբոլով զբաղվող աղջիկների թիվը, կազմակերպվում են մանկապատանեկան առաջնություններ , որը մինչ այդ չի եղել: Առաջնությունը կազմակերպվում և իրականացվում է ՀՖՖ-ի կողմից՝ ԿՄ11, ԿՄ13 և ԿՄ15 տարիքային խմբերով: Մանկապատանեկան առաջնություններին մասնակցում են թիմեր ողջ Հայասատնից: Ակումբային թիմերը ևս ավելացել են, ինչպես նայև առաջին և բարձրագույն խմբերում առաջնություններին հանդես եկող թիմերը:

2.3 Հայաստանում կանանց ֆուտբոլի ընկալման և զարգացման գործընթացում սոցիալական մեդիայի դերը

Չնայած այն փաստի, որ պատմությունը ցույց է տալիս կանաց ֆուտբոլի վաղեմության, ինչու ոչ նաև պատմության ու հասարակական քաղաքական կյանքում մեծ դերի, այնուամենայնիվ տարածվածության ու լուսաբանման առումով տղա-մարդկանց ֆոտբոլի հետ նույնիսկ համեմատել չենք կարող:

Մեծ է սոցիալական մեդիայի դերը թե' դրական և թե' բացասական իմաստով: Հասարակությունը տեղեկատվություն է ստանում սոցիալական մեդիայից, որի արդյունքում ձևավորում կարծիք, ինչպես նաև ընտելանում այն ամենին ինչը մինչ այդ իրեՑն խորթ էր: Սակայն տարիներ շարունակ Հայաստանում եղել է այդ խնդիրը: Կանաց ֆուտբոլը Հայասատնում չի լուսաբանվել, չեմ վախենա նշել նաև, որ կան մարդիկ որոնց մինչ օրս էլ հայտնի չէ կանանց ֆուտբոլ ասվածը: Սակայն վերջին տարիներին նկատվում է դրական աճ: Շատ լրատվական և մարզական կայքեր ներկայացնում են կանաց ֆուտբոլը մեզանում, իհարկե մեծ մասամբ դրանք կանաց

ազգային հավաքականի կարևոր հանդիպումներ են, որոնք լուսաբանվում են ոչ դրական նոտայով, ինչը հետևանքով մարդիկ թերահավատորեն են վրրաբերվում կանանց ֆուտբոլին[8]:

Այսօր համաշխարհային ֆուտբոլի նվաճումներից մեկը կանանց ներգրավումն է ֆուտբոլում, որում որպես խթանող կողմ հանդես են գալիս ՀՖՖ-ն, ՈՒԵՖԱ-ն և ՖԻՖԱ-ն: Գիտակցելով որ մեծ ֆուտբոլում անհնար է հասնել մեծ նվաճումների առանց ֆոտբոլի մասսակայանացման ՖԻՖԱ-ն, ՈՒԵՖԱՆ-ն և ազգային ֆեդերացիաները շեշտը դրեցին ֆուտբոլի մասսայականացման վրա: Այժմ ՀՖՖ-ի մի շար ծրագրեր կանաց ֆուտբոլի մասսայականացման և զարգացման ուղղությամբ.

- մարզիչների վերապատրաստումը կականց ֆուտբոլում
- դպրոցահասակ աղջիկների շրջանում մանկապատանեկան առաջնու-թյունների կազմակերպումը

ՀՖՖ-ն այս ամենին զուգահեռ նաև լուսաբանում է աղջիկների մասնակցությամբ առաջնությունները:

Իհարկե այս ամենը մասին լավ գովազդը կարող է ավելի շատ տաղանդավոր աղջիկների բերել դեպի ֆուտբոլ, բայց ցավոք դեռևս պատշաճին լուսաբանումը հեռու է իրականությունից: Ի վերջո առաջարկը ծնում է պահանջարկ, լավ գովազդը ավելի շատ մարդկանց հետաքրքրությունն է ուղղում դեպի թեման[9]:

[8] Կանանց ֆուտբոլ. դոփելով տեղում, https://hetq.am/hy/article/22652, 2013
[9] Ընկերական հանդիպում կանայք.մարտի 4-ին և 6-ին `Հայաստան vs Լիտվա,խաղին ընդառաջ https://youtu.be/t4VwN_m85VY ,2020

18
FFA

3.«ԱԽԹԱՄԱՐ» ԱՂՋԻԿԻՆԵՐԻ ՖՈՒՏԲՈԼԻ ԱԿԱԴԵՄԻԱ

Հայաստանում կանանց ֆուտբոլը թևակոխում է մի նոր շրջափուլ: Իհարկե Հայաստանում ֆուտբոլային ակումբները ունեն կանանց թիմեր, բայց այդ ակումբները ի սկզբանե եղել են ստեղծված տղաների համար: Մեկ այլ կարևորություն ու դեր ունի «Ախթամար » աղջիկների ֆուտբոլի ակադեմիան, անվանումը արդենի իսկ հուշում է վերջինիս մեծ ու կարևոր առաքելության մասին:

Մեկ տարի առաջ՝ 2022 թվականին, ՀՀ Արագածոտն մարզում հիմադրվեց ակադեմիան, որի նպատակն է զարգացնել կանանց ֆուտբոլը Հայաստանում: Պատրաստել բարձրակարգ ֆուտբոլիստուհիներ, որոնք իրենց անունն ու դերը կթողնեն հայկականն և միջազգային ֆուտբոլում: Ակադեմիան հիմադրվել է սփյուռքահայ Խաչիկ Կորկյանի, ով և ակադեմիայի հիմնադիր տնօրենն է, և ԱՖՖ Արագածոտնի մարզի ներկայացուցիչ, «Ախթամար» աղջիկիների ֆուտբոլի ակադեմիայի գործադիր տնօրեն՝ Նարեկ Էլոյանի ջանքերով:

Քանի որ նախորդ գլխում խոսվեց գովազդի և մեդիա դաշտի կարևորության մասին, ապա նշենք, որ նորաբացայի ակադեմի գործունեությանը բազմիցս անդրադարձ են կատարել տարբեր լրատվականներ: Մի փոքր մեջբերում ակադեմիայի նախագահ Խաչիկ Կորկյանի «Արմենպրես»-ին տված հարցազրույցից. *«Շատերը չէին հավատում, ասում էին աղջիկները ֆուտբոլ չեն խաղում: Ես ինքս ֆուտբոլ խաղացել եմ, աղջիկներս նույնպես և ես կարծում եմ, որ յուրաքանչյուրի պետք է խաղալու, մարզվելու հնարավորությունը տալ: Այսօր աղջիկների ու նրանց ոգևորությունն ամեն ինչ արժե: Ցանկացողներն անվճար կարող են գալ և մարզվել»*,- ասել է Խաչիկ Կորկյանը[10]:

Սկզբնական շրջանում թերահավատ վերաբերմունք էր ձևավորված, քանի որ աղջիկներին ներգրավել ֆուտբոլում շատ բարդ է հատկապես Հայաստանում, սակայն մեկ տարվա ընթացքում ակադեմիան գրանցեց բավականին մեծ աճ: Վերջինիս մասին խոսենք փաստերով, եթե 2022թվականին ակադեմիայում մարզվում էին 50

[10]Ֆուտբոլային փառատոն՝ Արագածոտնի մարզում. «Ախթամար» աղջիկների ֆուտբոլի ակադեմիան նշում է մեկ տարին, https://armenpress.am/arm/news/1114486.html?fbclid=IwAR3RemR2XzGZx-U_uzkWQiELDxkhoHR4ldAf3bHwHGpOfWJwP2FyFL8VKEs,2023

ֆուտբոլիստուհի՝ 8-ից 15 տարեկան, ապա այժմ՝ մեկ տարի անց ակադեմիայում մարզվող և տարբեր տարիքային խմբում առաջնությունների մասնակցող դպրոցահասակ աղջիկների թիվը հասնում է 251-ի[11]: Բացի քանակական աճից գրանցվել է նաև որակական աճ. Ընդամենը մի քանի ամսում կազմավորված ԿՄ15 տ թիմը Հայաստանի Մանկապատանեկան առաջնությունում զբաղեցրեղ երկրորդ տեղը(2023թ): Որակական աճը շարունակվում է, քանի որ վերջինս իր պայքարը այս տարի կշարունակի առաջին խմբում:

Ակադեմիան այս տարի հուլիսի 6-ին Արագածոտնի մարզի Ապարան քաղաքի քաղաքային մարզադաշտում մեծ շուքով նշեց ակադեմիայի հիմնադրման մեկ տարին: Դա մեծ ֆուտբոլային մեծ փառատոն էր որին մասնակից եղան ոչ միայն ակադեմիայի ֆուտբոլիստուհիները, մարզիչները,ծնողները այլև ներկայացուցիչներ ՀՖՖ-ից և արտերկրից և Հայաստանի այլ մարզերից:

Նշենք որ այժմ Արագածոտն մարզի Արագած վարչական շրջանում ընթանում են շինարարական աշխատանքներ ակադեմիայի մարզադաշտի, ենթակառույցների կառուցման ուղղությամբ: Կառուցվելու է միջազգային չափանիշներին համապատասխան մարզադաշտ: Լինելու են նաև բոլոր պայմանները դասընթացների և կեցության համար:

Ցույց տալու համար ինչպիսի փոփոխություն է տեղի ունեցել նշենք 2012-16թթ ըստ ՈՒԵՖԱ-ի կանանց ֆոտբոլի զարգացման ծրագրի Հայաստանում կային ֆուտբոլով զբաղվող 325 աղջիկ[12], իսկ այժմ (2023թ) «Ախթամար» աղջիկների ֆուտբոլի ակադեմիայում մարզվում են 251 ֆուտբոլիստուհիներ:

Կանանց ֆուտբոլը ունի մի շարք առանձնահատկություններ, որոնք պայմանավորված են ֆուտբոլիստուհիների ֆիզիոլոգիական և մորֆոլոգիական առանձնահատկություններով, որոնք է պահանջում են համապատասխան մարզումային ծրագիր: Տարիքային առանձնահատկությունները պայմանավորված ֆիզիոլոգիական փոփոխություններով իրենց ազդեցությունն են ունենում մարզումների մշակման գործում: Մարզիչները ովքեր աշխատում են ֆուտբոլիստների հետ պետք է

[11] Աղջիկների ֆուտբոլի փառատոն՝ Արագածոտնի մարզում https://youtu.be/gmgsBFapO6s,2023
[12] ПРОГРАММА УЕФА ПО РАЗВИТИЮ ЖЕНСКОГО ФУТБОЛ,, WE CARE ABOUT FOOTBALL
Проекты национальных ассоциаций 2012 – 2016, ст.8

լավ պատրաստված լինեն, ֆիզիկական զարգացումն մշակելուն զուգահեռ պետք է ուշադրություն դաևձնեն նաև հուզական դաշտին,քանի որ կանայք այն ավելի շատ է օժտված հուզական գրգռականությամբ քան տղամարդիկ: Հետևաբար կարևոր է, որ մարզիչը ունենա մանկավարժական ընդունակություններ:

Այս ամենի մասին մտածել և մտածում է նաև ակադեմիան, որը նախատեսել է վերապատրաստման դասընթացներ աղջիկների հետ աշխատող մարզիչների համար, որոնք կանցկացվեն արտերկրից հրավիրված մասնագետների կողմից:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքում եկել ենք հետևյալ եզրահանգումներին՝

● Կանանց ֆուտբոլը իր վաղեմիությամբ չի զիջում տղամարդկանց ֆուտբոլին:

● Հայ աղջիկը, հայ կինը հաճախ է բախվել և բախվում արգելքների որոշ ոլորտներում, դրանցից է նաև սպորտը: Հայաստանում կան մարզաձևեր որոնք տարիներ շարունակ ասոցացվել են տղամարդու հետ, ինչի պատճառով շատ աղջիկներ սիրել, ունեցել են տաղանդ, բայց երբեք չեն զբաղվել՝ առավել ևս փորձել հասնել մեծ նվաճումների այդ մարզաձևերում:

● Այսօր համաշխարհային ֆուտբոլի նվաճումներից մեկը կանանց ներգրավումն է ֆուտբոլում, որում որպես խթանող կողմ հանդես են գալիս ՀՖՖ-ն, ՈՒԵՖԱ-ն և ՖԻՖԱ-ն:

● Հայաստանում կանանց ֆուտբոլն ի հայտ է եկել 1987թ.-ին: Առաջին խումբը ձևավորվեց «Նաիրի» ակումբում, այնուհետև ստեղծվեց Ապարանի «Նիգ» թիմը: Այդ թիմերը ղեկավարել են մեզանում կանանց ֆուտբոլն արմատավորած մարզիչներ Ռուբեն Սուքիասյանը, Վրադիմիր Տերյանը , Օնիկ Թովմասյանը և Լևոն Բարսեղյանը:

● Հայաստանում կանանց ֆուտբոլը թևակոխում է մի նոր շրջափուլ: Իհարկե Հայաստանում բոլոր ակումբները ունեն կանանց թիմեր, բայց այդ ակումբները ի սկզբանե եղել են ստեղծված տղաների համար: Մեկ այլ կարևորություն ու դեր ունի «Ախթամար» աղջիկների ֆուտբոլի ակադեմիան, որն առաջին և միակն է Հայաստանի ֆուտբոլի պատմության մեջ՝ հիմադրված բացառապես աղջիկների համար:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ս.Ս. Հակոբյան, Ֆուտբոլ (ուսումնամեթոդական ձեռնարկ), Երևան 2009
2. ПРОГРАММА УЕФА ПО РАЗВИТИЮ ЖЕНСКОГО ФУТБОЛ, WE CARE ABOUT FOOTBALL, Проекты национальных ассоциаций 2012 – 2016

ՀԱՄԱՑԱՆԱՆՑԱՅԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. Աղջիկների ֆուտբոլի փառատոն՝ Արագածոտնի մարզում https://youtu.be/gmgsBFapO6s, 2023
2. Ընկերական հանդիպում կանայք. մարտի 4-ին և 6-ին՝ Հայաստան vs Լիտվա, խաղին ընդառաջ https://youtu.be/t4VwN_m85VY , 2020
3. Կանանց ֆուտբոլ. դոփելով տեղում, https://hetq.am/hy/article/22652, 2013
4. Հայ կինը՝ պատմության խորքերից, https://hetq.am/hy/article/33007, 2014
5. Ֆուտբոլային փառատոն՝ Արագածոտնի մարզում. «Ախթամար» աղջիկների ֆուտբոլի ակադեմիան նշում է մեկ տարին, https://armenpress.am/arm/news/1114486.html?fbclid=IwAR3RemR2XzGZx-U_uzkWQiELDxkhoHR4ldAf3bHwHGpOfWJwP2FyFL8VKEs, 2023
6. ТОП интересных фактов о женском футболе. https://footballstyle.com.ua/news/177.top_interesnih_faktov_o_zhenskom_futbole, 2020
7. 100 лет назад женский футбол был популярнее мужского. И это не шутка https://www.championat.com/football/article-3707013-interesnye-fakty-ozhenskom-futbole-chempionat-mira-po-futbolu-sredi-zhenschin.html, 2019